

ՏԵՂԵԿԱՆՔ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 5.1. Ջրօգտագործողի իրավունքները և պարտականությունները

Ջրօգտագործողն իրավունք ունի՝

ա) օրենքով և պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով ստանալու ոռոգման ջուր.

բ) օրենքով սահմանված կարգով հիմնադրելու Ընկերություն.

գ) անդամակցելու Ընկերությանը.

դ) ծանոթանալու Ընկերության կանոնադրությանը, ներքին կանոնակարգին, վեճեր լուծող հանձնաժողովի կանոնակարգին, վերստուգող հանձնաժողովի լիազորությունների և գործունեության կանոնակարգին.

ե) մասնակցելու Ընկերության վեճեր լուծող հանձնաժողովի նիստերին:.

գ) պահանջել և ստանալ ընկերության տնօրինությունից իր հողատարածքն ընդգրկող հիդրոմիավորի ամբողջ ոռոգման ջրամատակարարման ռեժիմն ու փաստացի իրականացված ջրաբաշխման հաշվեկշիռն՝ ըստ առանձին ջրօգտագործողների ջրապահանջի.

է) նույն հիդրոմիավորումում ընդգրկված ջրօգտագործողների ընդհանուր թվի առնվազն երկու տոկոսի մասնակցությամբ՝ ընկերությանը ներկայացնել և ընկերության վարչական խորհրդում սահմանված կարգով քննարկել ջրաբաշխման հաշվեկշիռն՝ ըստ առանձին մշակաբույսերի ոռոգման ռեժիմի և նորմայի կազմած չլինելու, ինչպես նաև առանձին ջրօգտագործողների կողմից ոռոգման ռեժիմի և/կամ նորմայի խախտման վերաբերյալ հարցերը:

Ջրօգտագործողը պարտավոր է՝

ա) ոռոգման ջուր ստանալու համար Ընկերության հետ կնքել ոռոգման ջրի մատակարարման պայմանագիր.

բ) յուրաքանչյուր ամսվա ընթացքում մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարը կատարել մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 15-ը:

Հոդված 11. Ընկերությունից անդամների դուրս գալը և անդամության դադարման հիմքերը

Ընկերության անդամները կանոնադրությամբ նախատեսված կարգով իրավունք ունեն դադարեցնել իրենց անդամությունը: Կանոնադրությամբ կարող է նախատեսվել, որ Ընկերությունից դուրս գալ ցանկացող անդամն այդ իրավունքից օգտվում է միայն ոռոգման շրջանի վերջում: Եթե Ընկերությունն այդ անդամի համար կատարել է ծախսեր՝ նախագծման, շինարարության կամ ոռոգման համակարգի շահագործման նպատակով, ապա նա կարող է Ընկերությունից դուրս գալ միայն այդ ծախսերի՝ իր մասի համարժեք գումարը հատուցելուց հետո:

Ընկերությունում անդամությունը դադարում է, եթե Ընկերության անդամը կորցրել է Ընկերության անդամ լինելու համար օրենքով սահմանված իրավական հիմքերը: Ընկերության անդամը դուրս է գալիս Ընկերությունից, եթե վաճառել է Ընկերության սպասարկման տարածքում գտնվող հողատարածքը: Այդ դեպքում վաճառողը և գնորդը պետք է գրավոր հայտնեն վարչական խորհուրդ, թե նրանցից ով է վճարելու Ընկերությանն ունեցած պարտքը: Գնորդը կարող է անդամ դառնալ Ընկերությանն ունեցած պարտքը մարելուց հետո:

Ընկերության անդամը կարող է վարչական խորհրդի որոշմամբ հեռացվել Ընկերությունից, եթե մեկ տարվա ընթացքում երկու և ավելի անգամ՝

ա) խախտել է Ընկերության կանոնադրության և (կամ) ոռոգման համակարգի կառավարման և ջրօգտագործման ներքին կանոնների պահանջները.

բ) չի կատարել մատակարարված ոռոգման ջրի վճարը պատշաճ ձևով կամ ջրի մատակարարման պայմանագրով սահմանված ժամկետում.

գ) Ընկերության կողմից գանձվող այլ վճարները կատարելուց հրաժարվել է կամ ուշացրել է դրա կատարումը.

դ) հրաժարվել է վերականգնել Ընկերությանն իր մեղքով հասցված վնասները:.

ե) մեկ ոռոգման շրջանում երկու անգամից ավել խախտել է ոռոգման ռեժիմն ու նորման և վնաս հասցրել նույն ընկերության այլ անդամների հողատարածքների ոռոգման գործընթացին:

Ընկերության կանոնադրությամբ կարող են նախատեսվել անդամությունից հեռացման այլ հիմքեր: